ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

15.04.24թ. N 02/16.4/4924-2024

<<Հիդրո>> սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
պարոն Ավետ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ hidro.avet@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Հիդրո>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2024 թվականի փետրվարի 27-ին կնքվել է ՀՀ Սյունիքի մարզի գ. Ախլաթյանի և գ. Աշոտավանի կրթահամալիրների կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/42 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 2323-Ն որոշմամբ նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի համաձայն 2024 թվականի մարտի 6-ին Ընկերությանը ծանուցվել է Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին N 1 համաձայնագրի նախագիծը՝ ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2024 թվականի մարտի 28-ը ներառյալ (15 աշխատանքային օր): Ընկերության կողմից Պայմանագրի 8.14 կետով սահմանված ժամկետում չեն ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները: Ներկայացվել է բանկի կողմից տեղեկանք՝ պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները գրավների կնքելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու մասին:

Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2024 թվականի ապրիլի 15-ից միակողմանիորեն լուծում է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.14 կետի պահանջները:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2024 թվականի ապրիլի 15-ին կտեղադրվի տեղեկագրում:

Ընկերության կողմից որպես **գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝** բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը սահմանված կարգով կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվեհամարին գումարը փոխանցելու նպատակով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման N1 հավելվածի 32-րդ կետի 10-րդ, 16-րդ ենթակետերի, 17-րդ ենթակետի <<դ>> պարբերության և 33-րդ կետի 12-րդ ենթակետի, ինչպես նաև Հրավերի 8.14-րդ կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին (պատվիրատուի ղեկավարի որոշումը կայացվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե սահմանված ժամկետում վճարի հայտի ապահովման գումարը:

Հարգանքով՝

Պարտականությունները կատարող

15/04/2024

X

Signed by: ANTONYAN KAREN 1810760100

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան
Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան
Հեռ: 011621722

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

«____» _____ 20 թ.